

օրինակը մինչև այսօր ամսոյ վերջը եւս չեմ ունեցել, որի բովանդակութիւնը մանրամասնօրէն ինձ ծանօթ չէր:

2) Արդեօք այնպէս չէ, որ իշխան Ամատունին պայմանագիրը իր մօտ ունենալով գիտէր, որ իմ պայմանագրիս ժամանակը լրանում է 1881 թ. ապրիլի վերջը: Ուրեմն թէ բնեֆիտ էր, թէ 300 ր. պէտք է եւս մինչև իմ պայմանագրիս լրանալը ստացած լինէի: Ուրեմն:

3) Ինչո՞ւ երբ իշխան Ամատունից բնեֆիտիս հաշիւն փող եմ խնդրում, նա իմ միամտութիւնից օգուտ է քաղում, եւ ինձ «մայիս ամսուայ ուսուցիչը ստացա՛յ» ստորագրել տալիս, քանի որ իմ պայմանագրիս վերջանում էր ապրիլի վերջին, որը նա գիտէր, բայց եւս չը գիտէի, քանի որ նա ինձ բնեֆիտի գոնեայ գումարը պարտ էր վճարելու:

4) Արդեօք բոլոր անցածը ի նկատի առնելով, որի մասին եւս գրել եմ, եւ տեսնելով որ իմ պայմանագրիս ժամանակը լրացել է, երբ եւս գրում եմ իշխան Ամատունին, որ մայիս ամսուայ համար ինձ ապահովանէ, որովհետեւ եւս պայմանագիր չունեի մայիս ամսուայ համար: Այդ յանցանք է:

5) Եթէ եւս անցեալից խրատուած օգուտ եմ քաղում իմ գրութիւնից, որ պայմանագիր չունեմ, եւ էլ չեմ կամենում առանց դերեր ունենալու 150 ր. ստանալ եւ իշխան Ամատունու ձեռքին խաղաղութիւնը վերջ տալ, այդ յանցանք է. եւ ով կարող էր ապահովանալ, քանի որ ոչինչ պայման չը կայ, թէ իշխան Ամատունին ամբողջ մայիս ամսուայ ընթացքում ինձ մի որ եւ ինչ նշանաւոր դեր կը տայ, միթէ կարելի չէր սպասել, որ նա ինձ մի աղախնի դերում, կամ կենդանի պատկերում դուրս կը բերէ:

6) Թող իշխան Ամատունին մայիս ամսուայ ուսուցիչը տուած համարէր, միթէ նա ինձ մայիս ամսուայ համար պարտական չէր ապահովանալու: Կրկնում եմ, ապրիլի վերջին լրանում էր իմ պայմանագրի ժամանակը, եւ ոչ իմ բնեֆիտիս էի ստացել, ոչ էլ բնեֆիտից հասանելի մնացած գումարը, իսկ եւս իշխան Ամատունից ոչինչ ստորագրութիւն չունեի եւ ոչ ունեմ. ստացայ պայմանագրիս օրինակը, բայց իշխանը աւելորդ էր համարել իր անունը ստորագրելու: Ուրեմն եւս մայիս ամսում որ թղթովը պէտք է իշխանից ինձ հասանելի պահանջէի, եւ ինչո՞ւ պէտք է եւս առանց պայմանի ծառայէի, թող

ուսուցիչը 150 ր. հաշուէին, դրա դէմ չէի: Միթէ — չէնց եւս պարտական եմ միշտ ապրիլ խաղաղութիւնը պահպանելու:

Իշխան Ամատունին իմ նամակիս չը պատասխանեց, ինձ հետ ոչինչ չը խօսեց, եւս հասկացայ որ նա ինձ ոչ բնեֆիտ է կամենում տալ, ոչ մայիս ամսի մէջ կամենում է պարտավորել ինձ դերեր տալու, ուրեմն լուրջեմ ինձ հասանելի փողից յետ է առնում մայիս ամսուայ համար գրած ուսուցիչը, որով մասնաժողովին մընում է 150 ր. եւ իշխան Ամատունին ազատութիւն է ինձ դերեր տալու պարտաւորութիւններից, որով մենք բաժանուում ենք միմեանցից: Բայց իշխանը իր նպատակին այդ կողմից հասնելուց յետոյ, հարկաւոր համարեց իմ վարկը վայր ձգել հասարակութեան առաջ: Կախեց թատրոնի պատերին յայտարարութիւն եւ մինչև օրս չարժանաւորում է ինձ դէմ իր գործը: Այս ամենս որ մասնաժողովի մատենաների մէջ չը կայ, հասարակութեան դատողութեանը թողնելով, հարցնում եմ իշխան Ամատունուց: 1) Ի՞նչ է պատճառը որ ամբողջ սեղօնում ինձ դերերից զրկեցիք, այնպէս պիտեանէր զրկւի, որ եւս դեր չունենաւ: 2) Ինչո՞ւ երբ ինձ եւս ծափահարում, միշտ վարագոյրը արգելքներ է դնում բարձրանալու: 3) Ինչո՞ւ ուրիշների բնեֆիտները համար աշխատում էիք, իսկ իմ մարտի 2-ին բնեֆիտիս որչափ էլ որ աշխատում էի, որքան էլ որ մարդիկ գնում էին թատրոն տեսնակ առնելու — միշտ ասում էին՝ կաստայում տօմսակ չը կայ. սրա համար վկայներ չատ կան, այնպէս որ եւս կարծում էի թէ տօմսակները ծախվել են, իսկ մարտի 1-ին երեկոյեան անձամբ կը գնում կը տեսնեմ, որ կաստայում լինեմ եւս տօմսակները, այնպէս որ եթէ ներկայացումը տեղի ունենար նոյն երեկոյեան թատրոնի դահլիճը կէտից աւելի դարդակ պէտք է լինէր: 4) Ինչո՞ւ ապրիլի վերջին ներկայացման ժամանակ դուք կանգնած էիք կուլիսումը եւ ժողովուրդը բոլոր ժամանակ ինձ դուրս էր կանչում, բայց պ. Սարգսեանցը, կուլիսի յուշարարը զանգը չէր խփում ինձ համար, ինձ դուրս չէին թողնում:

Այս ամենը կրելով, եւս մինչև ապրիլի վերջը, ինչպէս իմ պայմանագրիս ժամանակը, կատարեցի իմ պարտաւորութիւնս. իսկ ի՞նչ վերաբերում է մայիս ամսոյ 150 ր. փողը դուք պահել էք ձեզ մօտ, եւս ոչինչ աւելորդ փող չունեմ ստացած:

Անցածը բոլոր անցել էր, իշխան Ամատունի, դուք ձեր պատւին դէմ չը համարեցիք արդեօք գնելու, որ քաղաքային թատրոնը ինձ տան, դուք արգելեցիք դերասաններին որ դան իմ ներկայացման մասնակցեն, աֆիշները պատերից սկսեց պատռուել, ներկայացման երեկոյեան տարածեցին, որ ներկայացում չը կայ... ներկայացումը եղաւ. եւ չը տեսնուած համակրութիւն ստացայ թիֆլիսի պատուելի, սիրելի հասարակութիւնից եւ քաղցր միաս բարեկեցութիւն հեռացայ թիֆլիսից — իսկ ձեր ինձ դէմ վատութիւնը մնաց: Գուք մտածեցէք, իշխան, ձեզ չըբնագրաւոր այդ մի քանի պարտներին պատիւ է բերում, քանզի ինձ է դրանց կողմից, մի կնոջ պատին կաշել, որը իրենց ոչինչ չէ արել: Այդ նիւ խմբագրապետ, այս անգամ էլ ձեր համբերութիւնը փորձելով, խնդրում եմ հիւրասիրէք այս իմ նամակս ձեր ազնիւ թերթի մի անկիւնում, որով կը մնամ ձեզ շատ շնորհակալ:

Աստղիկ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Այն բանը, որտեղ կալանաւորված է յանցաւոր Գիտօ, պահպանվում է երկու խումբ գինւորներից: Ժողովուրդը այնքան զայրացած է, որ երկիւղ են կրում, թէ նա կը սպանի յանցաւորին, Լինչի դատարանին ենթարկելով: Կառավարչական բոլոր հիմնարկութիւնները փակված են: Մինիստրները չեն դուրս գալիս Ապիտակ տանից: Թանցաւորի մօտ նամակներ են դնում, որոնցով նա յայտնում է իր մտադրութիւնը նախագահին սպանելու մասին: Թանցաւորից Գիտօն խաղաղօրէն մի կառք էր վարձել եւ պայմանաւորվել էր կառապանի հետ, որ երկաթուղու կայարանից դուրս գալուց յետոյ շուտով նրան տանէր գերեզմանատունը: Միեւնոյն ժամանակ մարդասպանը մի երկաթային թղթեր էր յանձնել, որոնցից եւրեւմէ է նրա խելագարութիւնը: Քննութեան ժամանակ Գիտօ յայտնեց, թէ նա

գիւր, որոնք ափսոսում ու ողորմ են Ակոր եւ Առաքել վարժապետների ժամանակները, միասակար պիտի համարեն ամեն մի մարդու, որ վերջինիս հայեացքներն ունի աշխարհաբանի եւ նորա գործածութեան վրայ: Ինչ ուրիշ է «Փարոսի» Մոծակը, որ եւս երկար չը մնացի Լէյմիածնի ձեռնարկում, այս, պարոն Մոծակ. եւս աշխատում էի ազգիկ աշակերտների վրա այդ հարցի վերաբերմամբ իմ տեսակետից, բայց նոյնազգիսը հանել զբարեւոյի սովորելու հարկաւորութիւնը (մի վախճ) եւս չէի կարող, քանի որ ինքս բաղդ ունեմ փողը ինչ հասկանալու գրաւութիւնը դերը եւ նշանակութիւնը: Բայց այդ չէր Լէյմիածնից իմ հեռանալու պատճառը. ինձ ոչ թէ այնտեղ վարժապետ չընդունեցին, այլ... բայց եւս ամաչում եմ լրագրական վսեմ խօսքը ծառայեցնելու ստախոսութիւնների դէմ պաշտպանվելու համար. եթէ դուք իմացաք իմ Լէյմիածնից հեռանալս, ինձ շատ լաւ յայտնի է որ դուք կարող էիք իմանալ եւս իմ այնտեղից հեռանալու իսկական պատճառը. եթէ ձեզ հարկաւոր էր յայտնի պատճառներով ազաւաղել ճշմարտութիւնը, այդ ձեր լերկու բարեկամների փողբիկ խօսակցութեան մէջ առաջին օրինակը չէ:

Շատ ափսոսում եմ որ սովորված էի մոցնել այնտեղ այս քանի տողերը. բայց ինչ արած. շարունակեմք մեր այս տողերով ընդհատված խօսքը:

«Փարոսի» պ. Մոծակը*) եւս մեր նախնիքների

*) Որք. ի միջի այլոց նկատեմք, գուցէ իր սրբաօտութիւններին աւելի ոյժ տալու համար, գրում է իր լերկու բարեկամների խօսակցութիւնը թիֆլիսի բարբառով. բայց, պարոն, հարկաւոր է առաջուց սովորել եւս յետոյ գրել այդ բարբառով: միայն ի՞նչ է պարոն զեռն չեն կազմում թիֆլիսի բարբառը. գուք սաստիկ աղաւաղում էք այդ ուսուցիչ կենդանի հայ բարբառը խառնելով նորա ձերը գրականական լերկու ձեւերի հետ. թիֆլիսեցիք չեն ասում՝ կարդացել, խօսացել, այլ՝ կարդացիլ, խօսացիլ, չեն ասում՝ կասեմ, այլ՝ կիսեմ եւս այլն:

փէշերը ձեռքից չը տուող ուրիշ հասներները կարծում են թէ զրականութեան մէջ աշխարհաբանի գործածութիւնը քարոզողները ծածկում են դուրանով իրանց գրաբանի չիմանալը. եթէ, ճշմարիտ, այդպէս նայելու լինենք մեր այժմեան գրողների լեզուի վրա, պիտի ենթադրենք որ «Փարոսի» էլ խառնում է գրաբան աշխարհաբանի հետ իր գրաբան լեզուի քաջ իմանալը: Երբ տուլու համար Այդ շատ ուրախալի է, որ «Փարոսը» լաւ գիտէ գրաբանը, բայց հազիւ թէ նորա բաժանորդների դիտարկութիւնն է, ստորագրելով «Փարոսին», սովորել նորա միջոցով հին հայերէնը, ո՞չ. բաժանորդների համար հարկաւոր է բովանդակութիւնը, ընթերցանութեան նիւթ եւ պատկերներ: Ուրեմն այստեղ խօսքնիս ինքն ըստ ինքեան դառնում է «Փարոսի»: Բոլորն ուրիշ փողը ինչ հասկանալու գրաւութիւնը դերը եւ նշանակութիւնը: Բայց այդ չէր Լէյմիածնից իմ հեռանալու պատճառը. ինձ ոչ թէ այնտեղ վարժապետ չընդունեցին, այլ... բայց եւս ամաչում եմ լրագրական վսեմ խօսքը ծառայեցնելու ստախոսութիւնների դէմ պաշտպանվելու համար. եթէ դուք իմացաք իմ Լէյմիածնից հեռանալս, ինձ շատ լաւ յայտնի է որ դուք կարող էիք իմանալ եւս իմ այնտեղից հեռանալու իսկական պատճառը. եթէ ձեզ հարկաւոր էր յայտնի պատճառներով ազաւաղել ճշմարտութիւնը, այդ ձեր լերկու բարեկամների փողբիկ խօսակցութեան մէջ առաջին օրինակը չէ:

Այդ բովանդակութիւնը անբովանդակ բառով կարելի է համարեալ բոլորովին որոշել. բայց ինչ անեմ. մարդկանց մեծամասնութիւնը սոսաւսարակ մեծ կարծիք է ունենում իր գործունէութեան վրա, եւս այդ պատճառով շատերը բէքէ քնն լինում, երբ որ համարձակվում են քննադատութեան ենթարկել նրանց գործը: Ահա ինչ տեսակ կարծիքներ են մինչև այժմ յայտնված «Փարոսի» բովանդակութեան մասին. այդ կարծիքները յառաջ է բերում պ. Զ. Մսերեանցը («Փարոս» Հայաստանի» 1881 № 1. երես 15). «Մոծակայի մեր ազգայիններից ասողք եղան՝ թէ մեր հանդիսի մէջ կարդալու բան չը կայ... իսկ ոմանք համարձակեցան տեսնու նաեւ՝ թէ մենք «Փարոսը» մեր քէ քի համար ենք հրատարակում... Ահա ազգասէրներ, քաջակամներ է պ. Մսերեանցը, անհ համալսարանական ուսմանը զարգացած անձինք, անհ լուսաւորեալ համարված կրթիչք մեր մատաղ սերունդին...» Բայց — չարունակում է պ. Մսերեանցը յառաջ բերելով մի ուրիշ կարծիք — թո՛ղ ներսի մեզ ի մէջ բերել այստեղ փարիզից գրված մեր մէկ

ազնիւ եւ գիտուն ազգակցի նամակից հետեւեալ քանի մի տողերն, որք նուիրված են «Փարոս» Հայաստանի» հանդիսի առաջակայ գործունէութեան եւ որք ճիշդ նկարագրել են նորա ցանկութեանց եւ ձգտողութեանց:

«Փարոս» այսուհետեւ առաւել եւս սխրայի պէտք է լինի ամենայն հայու, գրում է մեր ազգակցին, որովհետեւ հայուհոյ մը սիրան է որ պիտի կենսաւորէ դայն, եւս հայ սրտերի պիտի ներշնչէ գերկնափուռ աւելու առաքելութեան, բարոյականի եւ ազգասիրութեան:

«Փարոս» մի ծաղիկ պիտի լինի քաղցր վառ հայրենայից, որ պիտի բուրէ հայ Կղերմին զարնախաղաղ զեփուրը:

«Փարոս» մի ծաղիկ պիտի լինի քաղցր վառ հայրենայից, որ պիտի բուրէ հայ Կղերմին զարնախաղաղ զեփուրը:

«Գուք աշխատեցա՛ք «Փարոս» առնել շահաւետ ազգին, իսկ հանճարաւալն Ձեր Ամուսին՝ պիտի նովաւ փառք եւ պատիւ աւելացնէ ազգին յաջ ստարաց, ապացուցանելով՝ որ հայուհոյ գիտն ո՞չ միայն սրտիւ՝ այլ եւ գրչաւ մրցել ընդ եւրօպահային...»

Ճշմարիտ որ այսպիսի մի կարծիք մէջ բերելուց առաջ հարկաւոր է ներողութիւն խնդրել, այսպիսի վայրենի՝ ասական շողորմութիւններ անելը ամեն մի փողը ի շատէ բարեկիրթ մարդու համար ամօթ է, բայց նրանց լըսելը եւս առաւել սեփական թերթում տպելը աւելի քան ամօթ է՝ դա խաղաղակութիւն է եւս նախախնայ հրատարակական խօսքին. եթէ այդ պիտի խայտառակ շողորմութիւններ անողը արժանանում է հրատարակիչ կողմից ազնիւ եւ գիտուն անձանքների, ապա ինչքան պարզամիտ եւ անհեռաւոր պիտի լինի մարդ, որ քննադատութեան ենթարկէ «Փարոսը» եւս քան ըրեալութիւնը: Տէր Աստուած. դեռ ինչ խանձարութիւն մէջ է գտնվում մեզանում հրատարակ-

մտադիր էր սպանել նախագահին Լոնգա Բրենչ ամբարանցի մէջ, որտեղ բնակվում էր Հարիլիլի կինը, բայց վերջինի հիւանդոտ դէմքը այնպիսի տպաւորութիւն գործեց յանցաւորի վրա, որ նա չը կատարեց իր մտադրութիւնը: Թանցաւորը այժմ հանգիստ է եւ ժամերով լուռ է մնում: Նա մի քանի անգամ խնդրեք էր տուել իրան թոշակ նշանակելու մասին: Բժիշկները յայտնել էին Գիտօի խելագարութիւնը եւ այդ պատճառով նրան թոշակ էր նշանակված: Գիտօ ամբողջ օրերով նստում էր Ապիտակ հան դրան մօտ եւ տեսնութիւն էր խնդրում նախագահից: Նա Հարիլիլին հետեւալ բովանդակութեան նամակ էր ուղարկել. «Ցաւում եմ, որ անբաւականութիւն ունեցաք Կոնգրէսին հետ: Գուք արդար էք եւ կը պահանջէք ձեր դրութիւնը: Գուք կարող էք յոյս դնել թէ իմ եւ թէ լուր պատուաւոր քաղաքացիների պաշտպանութեան վրա: Ցանկալի կը լինէր մի քանի լուրջով ձեզ հետ տեսնվել:» Նախագահը նրան ոչ մի անգամ չէր ընդունել:

ՖԻՆԱՆՍԻԱ

Ֆրանսիայի մէջ մեծ պատրաստութիւններ են տեսնվում Բաստիլիան վերցնելու տարեգարձը յուլիսի 14 տօնելու համար: Հանդիսի պաշտօնական նախագիծը արդէն հրատարակված է: Մինիստրները իրանց ստորագրեալներին հրահանգներ ուղարկեցին, որպէս զի վարչութիւնները անպատճառ մասնակցեն տօններին: Մինչդեռ հասարակութեան տրամադրութիւնը չէ համապատասխանում իսկական տօնի պայմաններին: Արտաքին անօպասելի դժուարութիւնները եւ հոգսերը կատարեալապէս գրաւում են հասարակութեան ուշադրութիւնը եւ անբաւականութիւնների առկիթ են տալիս: Ֆրանսիական այժմեան մինիստրութիւնը իր կոչումից ստոր յայտնվեցաւ, իսկ մի ուրիշ աւելի եռանդոտ եւ գործունէ պինիստրութեան կազմը անյարմար է համարվում մինչև պատգամաւորների նոր ժո-

կական խօսքի դործածութիւնը եւ քննադատութիւնը: Թող տպէ «Փարոսը» զանազան տուտուց եւ անբովանդակ ոտանաւորներ, շողորմութիւններով, մեծածայն, բայց փողբանչանակ խօսքերով լի կենսագրութիւններ եւ նկարագրութիւններ, թող զարգալէ «Փարոսը» իր էջերը զանազան հանգչաներից առված նկարներով, հողագործ բուրգարներ, Հագրաթը Վալայ Զէլլա-Սթիլան, Սթիլան Մասուղ Միլգայի, Մարօկոյի սուլթանի եւ նրա կանանց եւս այլն պատկերներով. մենք ոչինչ տեսնու իրաւունք չունենք: «Փարոսը» միշտ կարող է իր սեփականութեան իրաւունքը բաւանցնել եւ կը դանի էլ զանազան (Մ. Զննք) եւս լաւիւն ու գիտուն ազգակցիցներ, որոնք կը ծափահարեն եւ կառաջարկեն որ «Փարոսի» պատուելի հրատարակիչը չը յուսահատվի մի քանի վայր ի վերջ (**): խօսքերից, այլ ընդհակառակն հաստատ քայլերով առաջ դնայ իր «ազգագիտ» լիթ գործունէութեան ասպարիզում: Եթէ այդպէս են հասկանում մեր խնդճ ազգի օգուտը, կարիքները եւ պահանջները, թող շարունակեն արժանանում է հրատարակիչ կողմից ազնիւ եւ գիտուն անձանքների, ապա ինչքան պարզամիտ եւ անհեռաւոր պիտի լինի մարդ, որ քննադատութեան ենթարկէ «Փարոսը» եւս քան ըրեալութիւնը: Տէր Աստուած. դեռ ինչ խանձարութիւն մէջ է գտնվում մեզանում հրատարակ-

Մօսկվա

Սարգիս Սարգսեանց

*) «Միջոց», 1881. № 65. —**) Այդպէս դէրանք կանուանեն ճշմարտութեան խիստ ուշիւ խօսքը: — (***) «Փարոս» Հայ., 1881. № 1.

դովի գումարումը: Գործերը Ալիքիայի և Տոնիսի մէջ հասցրած են ամենապատեհաւոր դրութեան տեղական վարչութեան անդամակազմութեան շնորհիւ, որ զբաղված է անօգուտ վեճերով փոխանակ պատերազմական գործերի վրա ուշադրութիւն դարձնելու: Արարների գործարարները թու-Ամե-մից և այլ համարձակ արարներից առաջ-նորդված՝ ազատ գործուծ են ֆրանսական գործերի աշխի առաջ, կոտորուծ են ամբողջ գիւղերի բնակիչներին, գերի են առնում և անապատ են տանում հարկւրաւոր կանանց և երեխաների, ծաղրելով ֆրանսական իշ-խանութիւնը և նրա հեղինակութիւնը: Տոնիսի վրա նորերում հաստատած ֆրանսիայի գերիշխանութիւնը եւրօպացիներին ոչ թէ հովանաւորութիւն և պաշտպանու-թիւն հասցրեց, այլ այնպիսի դժբաղդու-թիւններ, որոնք չէին պատահում ֆրանսիայի գերիշխանութենից առաջ: Ֆրանսիայի դրութիւնը հիւսնային Աֆրիկայի մէջ չափազանց փնտրված է: Ֆրանսիական պատերազմական կարգերը ծաղրվում են եւ-րօպական պետութիւնների մէջ և ֆրանսիայի միջազգային նշանակութիւնն էլ փոքր առ փոքր կորցնում է իր կշիռը:

Գիտար է հասկանալ, թէ ի՞նչ նպա-տակով ժիւլ Զերիի միւնիստրութիւնը հե-տուում է թշնամական քաղաքականու-թեանը Թիւրքիայի և խալիպայի վերաբե-րութեամբ, քանի որ Աֆրիկայի մէջ այդ-պիսի դժուարութիւններ են ծագել: Մինչ-չե այժմ թու-Ամեմբ ամեն բան անում է ֆրանսիայի երկիրների մէջ, իսկ ֆրանսիա-կան կառավարութիւնը այդ հերոսին հա-լածելու և շուտով բռնելու փոխարէն զան-գատվում է Բ. Գրանը թիւրքաց գաղտնի գործակաւորների վրա: Գաղտնաւորը «Rég-ublique Française» լրագիրը այժմ այն-պիսի ձևով է խօսում Թիւրքիայի մասին, կարծես սուլթանի պետութեան և ֆրանսիայի մէջ շուտով մի պատերազմ պէտք է սկսվի: Կառավարչական օրդան «Հաւասի-րնկերութիւնը» ամենայն օր նոր խորհրդա-ծութիւններ է ապում թիւրքաց խարդա-խութիւնների մասին, որոնց նա վերաբե-րում է թշնամական շարժումը Ալիքիայի մէջ: Եթէ մինչև անգամ Թիւրքիան մաս-նակցի լինի արարների շարժմանը, այնու-ամենայնիւ ֆրանսիական կառավարութիւնը պէտք է կատարէ իր ուղղակի պարտա-կանութիւնը և վերականգնէ ֆրանսիայի հեղինակութիւնը հիւսնային Աֆրիկայի մէջ:

ԿԱԹՈՒԼԻԿ ԱԶԳԱՅՆՈՅ ԳՈՐԾԵՐԸ

Կաթոլիկ ազգայնոց նոր պատրիարքի մը ընտրութեան կայսերական իրաւունքն է կըսուի:

Ուստի յիշեալ ազգայնք քիչ օրէն նոր Պատրիարքի մ'ընտրութեան պիտի հրա-ւիրուին:

Ընտրելեաց համար չը կարծուիր թէ յուզում և կամ դժուարութիւնք ծագին, վասն զի Կաթոլիկ ազգայնոց խիստ մեծա-գոյն մասին ընտրելին լինել կը թուի Արհի-Ազարեան Արքեպիսկոպոսն, որ խիստ ար-ժանաւոր անձ մ'է:

Արհի. Ազարեան երկար ատեն փոխնոր-դութեան պաշտօն վարած և իւր ընտիր-յատութիւններովը խիստ զոհ քրմ է իւր կրօնակիցներին, որք կը յարգեն զինքն և իր վրայ կատարելապէս կը փստահին, որովհետեւ Ազարեան Արքեպիսկոպոսն հա-ւատարիմ է իր կոչմանն և իր լուսամտու-թեամբն և ազգասիրական գաղափարներովը սիրելի եղած է:

Արհի. Ազարեանի անձին վրայ կը փայլի նաև երկրպանական փորձառութիւն, որ ոչ նուազ կարևոր պայազայ մ'է:

Հետեալաբայ այս ամեն տեսութեամբ Ն. Սրբազնութիւնն յոյժ արժանաւոր անձն է Պատրիարքական աթոռին, որոյ՝ տարակոյս չը կայ թէ ուշ կամ կանուխ շուրջը կը բոլորին Հակ-հաստեան կոչուած կուսակ-ցութեան վերաբերող պատուարժան ազ-գայնք, զի փորձով պիտի տեսնեն թէ Արհի. Ազարեան այն միակ անձն է Հուս-մական ազգայնոց՝ եկեղեցականաց մէջ, որոյ լուստ որ գաղափարներն ազգային մի-ութեան գաղափարին բնա. հակոտնեայ չեն:

Վերջապէս՝ մէկ խօսքով՝ Ազարեան Ար-քեպիսկոպոսն իր ամենայն գեղեցիկ յատ-կութիւններովը, յոյժ փորձառութեամբն և ազգասիրութեամբը ժամանակի մարդն է և

յիշեալ Աթոռին միակ արժանաւոր անձը: Կրկնայնք ճշմարտիւ. շատ բան զրել ի-րեն համար, սակայն գիտնալով իւր համատ-նաւորութիւնն՝ այսքանը բաւական կը հա-մարիմք, վստահ լինելով որ մեր պատուար-ժան Հուսմական ազգայնք իրենց ընտ-րութեանը մէջ պիտի չը սխալին երբէք:

Արհի. Ազարեանի ընտրութիւնը կրնամք այժմէն կատարուած իրողութիւն մը նկա-տել, զի Կաթոլիկ ազգայնոց այս մասին տրամադրութիւնը կրնամք քաջ գիտնալ: Կաթոլիկ ազգայնոց կրտսէք, որք նորա ար-ժանիքը խիստ լաւ կշռած են:

(Լոյս)

ԻՏԱՒԻՒԱ

Խաւարկան արտաքին գործերի մինիստրը իշխան Բիւմարիի հետ մասնաւոր գրադրու-թիւն սկսեց, որից Խաւարիյի ազգասէրները նշանաւոր հետեանքներն են սպասում: Բայց իսկապէս ամբողջ այդ գրադրութիւնը նրանումն է կայանում, որ Մանչինի յայտ-նեց գերմանական կանցլերին, թէ նա ըն-դունել է խաւարկան արտաքին գործերի մինիստրի պաշտօնը, ուրախանալով, որ ինքը պաշտօնական յարաբերութիւններ կու-նենայ գերմանական քաղաքականութեան երեւելի գեղափարի հետ: Իշխան Բիւմարի պատասխանեց մի քաղաքավարի և բարե-կամական նամակով, որի մէջ յայտնում է, թէ նա մտադիր է պահպանել Խաւարիյի փորձված բարեկամութիւնը, որ մինչև այժմ՝ շատ լաւ հետեանքներ է ունեցել: Այդ նամակագրութենից ոչինչ կըրակացու-թեան չէ կարելի հասնել, մինչև չը հրատարակ-վի Բիւմարիի նամակի բնագիրը: Լրագիրնե-րը կարծիք են յայտնում, թէ Խաւարիյնե-րի յոյսերը տարածում են և յիշեալ գրադ-րութիւնը արված է միայն քաղաքավարու-թեան համար: Խաւարիյի հետ բարեկամու-թեան պահպանելը գերմանական կանցլերի քաղաքական նախագծի մի մասն է, բայց այժմ այդ նախագծի համեմատ Գերմա-նիայի համար անհրաժեշտ է դարձել և ֆրանսիայի բարեկամութիւնը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 28 յունիս 81

Ստրուկների բնաւորութիւնը միշտ այնպէս է, քանի որ նոցա հետ մեղմութեամբ ու քաղաքա-վարաբար կը խօսեն, այնչափ նոքա աւելի երես կառնեն և կուզեն ձեր զլխին նստել. այս բնա-ւորութիւնը եթէ ամեն տեղի հայերի մէջ էլ տե-րապետելի լինի, բայց աւելի երեսում է այստեղի հայերի մէջ, որի սպաւոյցը չարունակում է տալ ձեզ, Թիֆլիս նստած Կ. Պոլսից խօսող պ. Սոսիւնը: Այստեղ ծարրաւորաբար լուրով հա-րիւր տեղերից իրան առաջարկած հարցերին Միացեալ ընկերութեան հանդուցեալ տնօրէն Ժողովի մասին, եկել է Թիֆլիս ու այդ տեղից է տրուում գովել այն մարմինը, որ արդէն կերպարանաւորվել է: Շատ երկար խօսելը հարկաւոր չէ, միայն մի բանին թող պատաս-խանէ պ. Սոսիւնը, եթէ նրա սիրով իր անձ-նուէրը՝ ազգակիցներին և նրա այդչափ սիրովում է ընդհանուր շահերի և քրդհանուր յատկաշար-մութեան համար և այնչափ շատ նուիրված է լազիկ սիրոյն, հապա ինչու նրա անձնուէրը՝ ազգականները, իրանց տնօրէնութիւնը փոխի-լու օրից, էլ զաղարել են ոտ դնել Միացեալ ընկերութեան Ժողովների մէջ և նոր տնօրէն Ժողովին մինչև հիմայ հաշիւ չը տալով, գործին արգելք են լինում: Հենց այս միայն հերթ ապացոյց չէ, որ այդ ընդհանուր շահերի և յա-ռաջդիրմութեան համար խօսողը կեղծաւորու-թիւն է խօսում: Եթէ մի մարդ այդչափ սրտա-ցաւ է հայոց ազգի շահերին և կամ գոնէ լազուով այդպիսի հայրենասէր մէկն է ձեռնուած, հապա ուր էր նորա ձայնը սուր և ուրիշ աղ-գայնն ճգնաժամի մէջ. ուր էր նրա ձայնը ի նպաստ հենց այն ընկերութեան, որի համար նա այսօր երկմիականներ է կարդում. ուր էր այդ «մեծ գրադարի», այդ «Ալիքիայի Հիւզոյի» լիզուս, տաղանդը (?!!) և գրիչը այն ժամանակ,

երբ Կ. Պոլսի ընկերութիւնները նիւթական և բարոյական օգնութեան էին դիմում ամեն անհատի: Այդ բոլոր ժամանակ մեր Ալիքիայի Հիւզոյն լոււ էր, որովհետեւ նա և նորա ազգա-կանները չա՛հ չէին սպասում իրանց համար, իսկ այժմ ունեն չա՛հ մեղադրել «հակաազգային» ըզ-գացմունքի մէջ հենց նոցա, որոնք իրանք են եղել տարիներով պրօպագանդա անողը և ընկե-րութեան անունը շինողը Ռուսաստանում. ին-չու չէին մեղադրում մեզ այն ժամանակ ևս խիստ և կժոռ խօսելու մէջ, երբ Մշակը հարկւր անգամ աւելի խիստ էր խօսում առաւ-հայերի հետ Կ. Պոլսի ընկերութիւններին օգնե-լու համար:

Ինչ քննութիւն, կը կարծես Կ. Պոլսի գործողների մէջ, որ Մշակի խիստ խօսելից սոցա սիրով պիտի թուլանայ և ուշաթափ պի-տի լինին. մի հաւարակութիւն, մի խումբ, մի անհատ, որի գործունէութիւնը հաստատ-ված է ոչ անյողողող մտքի, համոզմունքի և դատողութեան վրա, այլ միայն «եռանդ» ասված փրօն զգացմունքի վրա, կարելի է շնոր-հաւորել այսպիսիների գործունէութիւնը և գործի յաջողութիւնը... Էլ ինչպէս է հարկաւոր խօսել սոցա հետ՝ մարդ մնում է շուարված. միզմ կը խօսես, ոչ ոք չի լսի. խիստ կը խօսես, սիրտ-ները կը թուլանայ. ասածներդ փստտելով և թուանշաններով կապացուցանես, քեզ ճանչող և անբովանդակ ճանկրով կը պատասխանեն. ինչ տեսակ մարդիկ են սոքա, դժուար է հաս-կանալ... Իմ բոլոր անձնական փորձերից և ծա-նոթութիւններից սոցա հետ, գոնէ մի բան շատ պարզ է այժմ ինձ համար, այն է, որ մեր ու սոցա մէջ ամեն բան թարս է, ինչպէս թարս է նաև հայոց ամբողջ աղբնաւորանի տառերի հնչիւնը աւելի սկսած մինչև ֆ...:

Մէկն էլ վեր է կացել այսօր և մի լրագրի մէջ չը լսված նորութիւն է աւետում աշխար-հին և յանդիմանում Մշակ և նորա աշխատակցի լազիտութիւնը: Նորա մէջ, որ մենք չը գիտենք թէ «Հայաստանի մէջ ընչից ապահովութիւնը պակաս է», վստայող «Միացեալ ընկերութեան կարելի չէ ուրիշ բանով կերակրել Հայաստանի սոված երեխաներին բացի «լոյսից»: Ահա այս-պէս են Կ. Պոլսի միտողները. կասես նրանց մի բան հարկւր անգամ, նրանք չեն հետաքրքր-վի լսելու համար, մէկ էլ կը տեսնես մի ամիս յետոյ վերկացաւ մէկը ու լսեցեք՝ աղաղակեց. կը լսես ուշի ուշով, բայց մէջից դուրս կը գայ այն, ինչ որ արդէն հարկւր անգամ ծանծանծա-ծոված է: «Հայաստանի մէջ ընչից ապահովու-թիւն չը կայ» փան որոյ Հայաստանի կիսավայ-րի տար ցեղերը հայ ազգաբնակչութեան հետ կամաց կամաց հաշտեցնելու համար, Ալիք-իտոր Հիւզոյի «լոյսն» է հարկաւոր, այլ ոչ թէ փոք կշտացնող, ամենքին միայնող գործնական պարագայութեան չէլոք ասպարէզ... Գոնէ սոքա այնչափ դիտողութիւն ունեային, որ աչքերը Վիկտոր Հիւզոյի լոյսից հենց մի բոյլ կարելով, դարձնէին իրանց շուրջը ու տեսնէին թէ Կ. Պոլսի հայ, թիւրք և քրդեր համաշխարհ միմանց հետ աւելի սիրով—միմանց հետ հայի խնդրով և մի և նոյն գործնական նպատակներով կապված լինելու պատճառ—թէ Կ. Պոլսի հայ և օտարացեղ զարգացած դատակարարներ են աւե-լի անկեղծ և համերաշխ միմանց մէջ: Վերջապէս եթէ գայերին անգամ հարկին է լինում հաշ-տեցնել մարդու հետ հայ տալով, ինչպէս է պա-տահում, որ Հայաստանի ազգերին միմանց հետ, հայի ճանապարհը՝ ձգած՝ Գեթիֆի «լոյսով» է հնարին լինում հաշտեցնել: Ո՛չ, սոքա անուղղե-լի են իրանց ստացած վանական միտքի դա-տարակութեան շնորհիւ. հազար ուղէք սոցա զլուրը մի կտոր գործնական բան մտցնել, դար-ձեալ ձեր ասածը սոցա զլուրը այնպէս յետ կընկնէ, ինչպէս պատին խփած բեղինի (լատինի) գնդակը:

Միւս սոքա ապացոյց կարող է լինել դար-ձեալ նոյն խեղճ Սոսիւնը, որը սկսել է կրկնել մայրանի միւս տեսակ սրամտութիւններ և ջնջի-ֆորմներ, ասելով թէ Հայաստանի մէջ գործ-նական բարենորոգումներ եթէ լորդ Բիկոնսֆիլդ-ը չը կարողացաւ մտցնել, ուր մնաց զօկտօր ֆեյլդիմաչեանը և այլն: Ասեցեք խղիւրմ, ինչ կազ և առնչութիւն կայ Հայաստանի մէջ տա-րական տեխնիքային տեղեկութիւններ առ ուս-ի-ճան առ բար, հեռու հեռու և տարածելու մէջ պատճառաւ խեղճ Սոսիւնը և Բիկոնսֆիլդի ա-նունն էլ տալ հարկաւոր համարեց. ուրեմն պ. Սոսիւնի ասելով լորդ Բիկոնսֆիլդն էլ կողմնա-

կից էր Հայաստանի մէջ բարենորոգումներ գցե-լու խնդրին. այդ գաղափարը մենք չը գիտէինք, կարող եմ շնորհաւորել պ. Սոսիւնին, որ նա մասնաւոր Բիկոնսֆիլդի քաղաքականութիւնը այդչափ լաւ գիտէ և որը իր կարծիքներն մէջ իրան Հստայ պապից ոչ պակաս անսխալական է համարում... Հա, à propos, պ. Սոսիւնը, որը այդչափ տարիներ յոգուածներ էր գրում պապի անսխալականութեան գէմ, հիմայ երևում է, որ այդ էլ համոզմունքի գործ չէ եղել, այլ միայն նախանձի Պիոս իններորդի վրա, որի պատիւը անսխալականութեան կողմից պ. Սոսիւնն էր ուզում առնել, ամենքին այսօր «ազգափնա» և «ընդհանուր շահերը» չը հասկացող անուանե-լով, բացի միայն իրանից և «Մեղու» խմբա-րից: Այս օրերս պ. Սոսիւնը «Արեւելեան Մամու-լի» խմբագիր պ. Մամուրեանին էլ կնքեց «ազ-գափնա» տալանում, Սոսիւնի մասին իր ամսագրի մէջ գրած ճշմարտութիւնների համար: Ուրեմն էլ ո՞վ մնաց Սոսիւնի համար ազգագու-տ և հարազատ. չը լինի թէ կաթոլիկութիւնից փախած բախտախնդիրները միայն և լուսաւոր-չականներից ամենամոլեռանդները...:

Այսպիսով վերջի վերջոյ յայտնվում է, որ երկիրը իսկապէս բոլորակ է, ինչպէս մարդու, մասնաւոր Կ. Պոլսի միտողների գլուխը, որ կէտից և տեսակէտից էլ սկսէք մտաւոր չըջա-կայութիւն անել ամբողջ տասնեակ յոգուածնե-րով, դարձեալ կը գաք կը հասնէք մի և նոյն կէտին, այսինքն, կը լսէք դարձեալ այն բաղա-րային ֆորմուներ թէ՛ «Հայաստանի մէջ ընչից ապահովութիւն չը կայ», «գործնական ուղղու-թեան համար միլիոններ են հարկաւոր»: Եւ ամեն ճշմարտախօս ազգափնա է: «Հարկաւոր չէ խիստ խօսել Կ. Պոլսի եռանդոտ գործիչների հետ» և այլն և այլն: Ահա հենց այսչափ միայն կա-րող է չօշափել օրինակ լինել ձեզ հակախաւու համար թէ ինչ արգասիք կարողաք թան տարուայ մէջ Կ. Պոլսի հայոց ազգային (բայց ներողութիւն՝ անզգային) ժողովը, որի մէջ նըս-տած սպիտակահար խօսողները, շատ բնական է, որ օրինակ պիտի առնեն այժմ այստեղի երի-տասարդ խօսողներից:

Համոզված եմ, որ այս բոլոր ընդհանուր դի-տողութիւնները հերիք չեն սոցա պիլիզ զլուրը մի սուղջ համոզմունք մտցնելու համար, վստ-նորոյ հաւատացած եմ, որ ստիպված պիտի գտնվեն դեռ երկար խօսել սոցա հետ, մասնա-ւոր հայի և չլոյսի խնդրի վերաբերմամբ, ա-ւելի պարզ և համոզիչ օրինակներ բերելով Հա-յաստանի մէջ հայոց հետ ապրող ազգերի փո-խադարձ յարաբերութիւններից:

Միւս ջերի պատասխան, որ լսվում է այստեղ շատերից այն է, թէ երբ «Մշակը» համակիր է գործնական ուղղութեան, ուրեմն ինչու նա չէ նուիրում իր ուժերը մի այլ, իր նպատակին յարմար ընկերութեան, օրինակ՝ արուեստաւո-րաց: Բայց սոքա չը գիտեն, որ նախ մի ընկե-րութեան անունը հասարակութեան մէջ արժա-րեք և ամբայնելը այնչափ հեշտ բան չէ, որ-չափ սոքա կարծում են. երկրորդ՝ «Մշակի» նպատակը իսկզբանէ հետ եղել է այն, որ նը-պատեւելով երեք ընկերութիւնների միացման, այնչափ ոյժ տայ այդ նոր Միացեալ ընկերու-թեանը, որ նա լինի համազգային և ձուլէ իր մէջ բոլոր միւս փոքրիկ ընկերութիւնները, ո-րանց գոյութիւնը առանձնակի և հատարակու-թիւնից զատ զատ դրամական օգնութեանց դի-մելը, միայն ջլատում է այդ հասարակութեան եռանդը որ և է ընկերութեան օգնելու համար: Ուրեմն, երբ «Մշակը» ունէր այսպիսի սրօգ-րամա, ինչպէս կարելի էր, որ նա չեղվէր նո-րանից և իր թափած այնչափ ջանքերից ձեռք վերցնէր ու անցնէր մի այլ ընկերութեան կող-մը. ուս խում Կ. պօլսեցում համոզմունքը չէ, որ իւրաքանչիւր բոյլէ փոփոխվում է. իսկ ինչ կը վերաբերվի նորան թէ «Մշակի» պահանջած գործնական ուղղութեան հետեւելով, «Միացեալ ընկերութիւնը» պիտի ձեռք քաշէր դադարու-թիւն տարածելու գործից, այդ մի աւելի անհե-թեթ խօսք է, որովհետեւ տեխնիկային կրթու-թեան հետ ինքը բոտ ինքեան կապված է և գրագիտութեան տարածելը:

Գրիգոր Նիկողոսեան

Խմբագիր—հրատարակող ԳԵՐԳՈՐ ԱՐԽՈՆԻՆԻ